ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) և Կրթություն և համերաշխություն արհեստակցական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), միասին՝ Կողմեր,

ցանկանալով համագործակցել Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ Խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները(վարքականոն) սահմանելու մասին ԿԳՄՍ նախարարի 2023թ. N 10-Ն հրամանի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, առաջացած վեճերի կարգավորմանն աջակցման ուղղությամբ,

կնքեցին սույն Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր)՝ հետևյալի մասին.

Հոդված 1. Հուշագրի նպատակը

1. Սույն Հուշագիրը սահմանում է Կողմերի գործողությունների շրջանակը, ինչպես նաև պարտավորություններն ու համագործակցային պայմանավորվածությունները՝ Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ Խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները(վարքականոն) սահմանելու մասին ԿԳՄՍ նախարարի 2023թ. N 10-Ն հրամանի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, առաջացած վեճերի կարգավորմանն աջակցման ուղղությամբ, որին կարող են մասնակից լինել այլ ուսուցչական միություններ, արհմիություններ եւ ոլորտային հասարակական կազմակերպություններ:

2. Սույն Հուշագրի նպատակն է նպաստել խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնների իրազեկմանը, դրանց վերաբերյալ տեղեկատվության հարստացմանը, վարքականոնների կարևորմանը և պահպանմանը: Սույն Հուշագրով Կողմերը պատրաստակամություն են հայտնում գործել համակարգված և փոխհամաձայնեցված, մեկտեղել ջանքերը սույն Հուշագրի նպատակներն իրականացնելու համար:

Հոդված 2. Համագործակցության պայմանները

3. Սույն Հուշագրի արդյունավետությունն ապահովելու համար Կողմերը պայմանավորվում են պարբերաբար իրականացնել ծրագրի իրականացմանն ուղղված անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում:

Հոդված 3. Կողմերի հիմնական պարտավորությունները

4. Նախարարության պարտավորություններն են՝

1) Սույն հուշագրով ամրագրված դրույթներն իրագործելու համար լիազոր մարմինների միջոցով ապահովել Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների անդամների և մանկավարժական աշխատողների մասնակցությունը

պլանավորված միջոցառումներին և ծրագրերին: Նախարարության տեղեկատվական ռեսուրսներով աջակցել ստեղծված բովանդակության տարածմանը: Վեճեր առաջանալու պարագայում ուղղորդել համագործակցող մարմին՝ դրանք ուսումնասիրելու նպատակով:

5. Կազմակերպության պարտավորություններն են.

1) Իր մասնագիտական ներուժն ու կարողությունները ներդնել հրամանի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը հետևյալ ուղղություններով՝

ա. Կազմակերպության կողմից իրականացվող սեմինարների բովանդակության մեջ ներառել հրամանի ներկայացման և իրազեկման պարտադիր բաղադրիչ,

բ. աշխատանքներ իրականացնել առկա ռեսուրսներով՝ օգտագործելով հատկապես մեդիահարթակները, տեղեկատվական, իրազեկող նյութերի ստեղծման և տարածման համար,

գ.հնարավորությունների շրջանակներում իրականացնել հետազոտություններ՝ վարքականոնների՝ առավել տարածված դեպքերը վերլուծելու նպատակով

դ. նախարարության պատվիրակմամբ, բազմամասնագիտական հանձնաժողովի միջոցով (կսահմանվի 9 անդամից բաղկացած հանձնաժողովի ստեղծման ընթացակարգ, որոնք ներկայացնում են նաև ոլորտային այլ կազմակերպություններ,) ուսումնասիրել առաջացած վեճերը, ներկայացնել եզրակացություններ

Հոդված 4. Ընդհանուր դրույթներ

6. Սույն Հուշագիրն արտացոլում է Կողմերի մտադրությունները և նրանց համար չի առաջացնում իրավական կամ ֆինանսական պարտավորություններ:

7. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու պահից և գործում է անժամկետ:

8. Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ձևակերպված առանձին արձանագրություններով, որոնք կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

9. Կողմերը կարող են պետական և մասնավոր անձանց հետ կնքել վերոհիշյալ նախաձեռնությունները իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմանագրեր և փաստաթղթեր:

10. Կողմերն իրավասու չեն որևէ ձևով կամ եղանակով օգտագործել մեկ այլ Կողմի անվանումը, պաշտոնական խորհրդանիշերը, կնիքները, կրթական նյութերը և այլ փաստաթղթեր, ինչպես նաև այլ Կողմերի անվանումների հապավումներն առանց համապատասխան Կողմի նախնական թույլտվության:

11. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Հուշագիրը՝ նախապես գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին 30 (երեսուն) օր առաջ: Սույն Հուշագրի դադարեցումը չի ազդում Հուշագրի շրջանակներում որևէ ընթացիկ ծրագրի կամ նախագծի իրականացման վրա, եթե Կողմերը որևէ այլ որոշում չկայացնեն:

Ստորագրված է 2023թ. դեկտեմբերի 20-ին Երևան քաղաքում, երկու հավասարազոր հայերեն բնօրինակով:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝	Կրթություն եւ համերաշխություն արհեստակցական կազմակերպության կողմից՝
ԱՐԱՔՍԻԱ ՍԿԱՋՅԱՆ Նախարարի տեղակալ	ՎԱՀՐԱՄ ԹՈՔՄԱՋՅԱՆ Նախագահ